

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (ԸՍՏ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ՎԱՆՔԻ ԶԵՌԱԳՐԱՏԱՆ Թ. 160 ԶԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆԻ)

Յասմիկ Կիրակոսեան

Ներածութիւն: Ուսուցողական գրականութեան մաս կազմող ուսումնական-ուղեցոյց ձեռնարկների ստեղծման պատմութիւնը եւ ընթացքը կապուած է գիտութեան եւ դպրութեան, գիտելիքի պատմական շարժի ուսումնասիրութեան հետ: Հայ հին մատենագրութեան ոլորտներից մեկը գիտելիքը փոխանցելու գործիքները՝ ուսումնական-ուղեցոյց ձեռնարկները կամ «վարդապետական գրքերն»¹ էին, որոնք առանձին պատմագրական, աստուածաբանական, հռետորական, բժշկագիտական, տոմարական-թուաբանական, քերականագիտական, աստղագիտական, փիլիսոփայական, տրամաբանական, ճարտասանական, բնագիտական եւ այլ երկերից բացի, կազմուել են ժողովածուների տեսքով: Այս յօդուածի նպատակն է ժէ. դարում գրուած եւ կազմուած Հայերէն մի ձեռագիր մատենանի ուսումնասիրութեան միջոցով ներկայացնել վաղ արդի շրջանում Հայ դպրութեան մէջ շրջանառուող ուսումնական ձեռնարկների ձեւաչափերից մեկը՝ ժողովածու-ձեռնարկը: Ինչպէս նշում է Մանուկ Աբեղեանը,

Հայ դպրութեան վերածնունդը, վանական ու ծխական դպրոցների բացումը, ընդհանրական ուսուցումը եւ այդ բնագաւառում եկեղեցականների ջանքերը վերսկսուեցին եւ նոր շունչ ստացան ժՁ-ժէ. դարերից եւ այդ շարժման կենտրոններից էր Նոր Զուղան², որտեղ ժէ. դարի 20-ական թուականներին Սիւնեաց Մեծ անապատի սան Խաչատուր Կեսարացին անցաւ վարժապետութեան Մովսէս վարդապետի ջանքերով հիմնուած դպրոցում³: Այս տեսութիւնը առարկայանում է նաեւ քննարկուող ձեռագիր ուսումնական ուղեցոյցի միջոցով, որը Նոր Զուղայի դպրատներում գործածուող ժողովածու ձեռնարկ էր⁴:

¹ Այս եզրի մասին տես Լ. Գ. Խաչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքները, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները, համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V-XVI դ.), Լիզպոն, 1998, էջ 188-189:

² Մ. Աբեղեան, Երկեր, հտ. Դ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 546-547:

³ Տե՛ս Պատմութիւն Նոր Զուղայու որ Յասպահան, Տե՛ս Պատմութիւն Նոր Զուղայու որ Յասպահան, հտ. Բ, Նոր Զուղա, ի տպարանի Ամեմափրկչեան Ս. Վանաց, 1881, էջ 252-253:

⁴ Ուսումնական նպատակով ժողովածոյ-ձեռնարկ կազմելու մասին տեղեկութիւն է տուել նաև Յարութիւն Տէր-Յովնանեանը՝ մատնանշելով Կոստանդնուպոլսի Զուղայեցու «Աշխարհածողովը». «Ծիմեալ է նա յամի 1687 զմատեան մի, յորում կան խառն առարկայք, խրատ վասն վաճառականութեան, սկզբունք թուաբանութեան, գործածութիւն Ազարիայի թուականին և այլ խառն պարագայք, որոց աղագաւ կոչեցաւ այն մատեան՝ «աշխարհածողով», տե՛ս Պատմութիւն Նոր Զուղայու որ Յասպահան, հտ. II, էջ 253:

1. Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատանը (այսուհետեւ՝ ՆԶ) պահուող հմր 160 ձեռագիրը⁵ եւ դրա ստեղծման պատմութիւնը

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրացուցակում թիւ 160 ձեռագիր մատենանը վերնագրուած է Ժողովածոյ, գրիչը Ստեփանոսն է, ստացողը՝ Մելիք աղէն: Զեռագրի գրչութեան ժամանակը նշուած է ԺԶ-ԺԷ. դարերը, վայրը՝ Նոր Զուղան: Պէտք է նշենք, որ ձեռագրի էջերում պահպանուած են մի քանի յիշատակարաններ, որոնցից առաջինը չափածոյ (էջ 143ա).

«Տէն հանէ զմեզ ի դարին,
Յարայութիւն Հօրն վերին,
Առաջնորդէ ի մատ դրախտին,
ԶՍտեփանոս մեղօք ի լին»:

Յաջորդ յիշատակարանում (էջ 327ա) կարդում ենք. «Քրիստոս Աստուած քո սուրբ եւ ընտրեալ հայրապետին Ներսէսի բարոյսութեամբն ողորմեայ ըստացողի գրոցս պարոն Մելիք աղէն»: Այս երկու յիշատակարանների տեղեկութիւններին, առ այն, որ գրիչը Ստեփանոսն է, իսկ ստացողը՝ Մելիք աղան, կարեւոր մի փաստ էլ յաւելում է երրորդ յիշատակարանը (էջ 334ա). «Տէր Յիսուս քո Սուրբ հայրապետին Ներսէսի բարեխօսութեամբն ողորմեա պարոն Մելիք աղէն և ծնողացն խօջայ Սաֆարին»: Վերջին յիշատակարանից պարզ է դառնում, որ Մելիք աղան պէտք է որ Զուղայեցի յայտնի խօջայ Սաֆարի⁶ որդին լինի: 1975 թուականին Յ.

Քիւրտեանը իր «Զուղայեցի խօջայ Սաֆար ու խօջայ Նազար եւ իրենց գերդաստանը» յօդուածում խօսում է նաեւ Սաֆարի որդի Մելիք աղայի մասին եւ նրան նկարագրում որպէս «գրասէր մէկը»: Նրա հաղորդմամբ գրիչ Ստեփանոսը եւս մեկ ձեռագիր ժողովածոյ է ընդօրինակել Մելիք աղայի համար, որը պահւում է Նիւ Եորքի 42-րդ փողոցի եւ Ֆիֆթ Աւընիւի Մատենադարանի ձեռագրերի բաժնում: Այս ձեռագիրն ունի 94 տնից բաղկացած «յիշատակարան Աստուածաշունչ գրոց, արարելայն Գոյն Ստեփանոց երէց որդի Ստեփանոսի, ի խնդրոյ Պարոն Մելիք Աղային, որոյ խուջայ Սաֆարին»: Ստեփանոս գրչի եւ Մելիք աղայի համագործունէութեան արդիւնքում ծնուել է նաեւ մեր կողմից քննարկուող ՆԶ 160 ձեռագիրը: Կարեւոր է նշել, որ Քիւրտեանը նշուած յօդուածում ներկայացնում է նաեւ Մելիք աղայի ժառանգների ընծայագիրը (1667, Յուլիս 28), որտեղ գրուած է, որ նրանք Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքին են նուիրաբերել Մելիք աղայի հինգ ձեռագրերը: Հինգ ձեռագրերից միայն «պատմագիրք-բառգիրք»-ի մասին Քիւրտեանը տեղեկութիւններ չունենալով նշում է. «... յայտնի է թէ ինչ է»⁷:

Վերոբերեալ տեղեկութիւնների եւ ստորեւ քննարկուող ՆԶ 160 ձեռագրի բովանդակութեան համեմատութիւնը թոյլ է տալիս փաստելու, որ գործ ունենք հէնց խօջայ Սաֆարի որդի «գրասէր» Մելիք ա-

5. Նկարագրությունը տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի*, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 838-839: Մեր կողմից ձեռագրի ուսումնասիրությունը կատարուել է Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի ձեռագրատանը (02.02.2022 -09.02.2022 թթ.)՝ ՀՀ գիտության կոմիտէի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B125 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

6 Հին Զուղայում առաջնակարգ դիրք զբաղեցնող խոջա Խաչիկի որդին էր խոջա Սաֆարը, որը իր գերդաստանին առաջնորդեց դէպի Նոր Զուղա և

մեծ դերակատարություն ունեցաւ ջուղայահայությունեան կրօնական և տնտեսական կեանքում (տե՛ս Յ. Քիւրտեան, «Զուղայեցի խօջայ Սաֆար ու խօջայ Նազար եւ իրենց գերդաստանը», - Բազմավէպ, 3-4/1975, էջ 379-396, 1-2/1976, էջ 52-86):

7 Տե՛ս Յ. Քիւրտեան, «Զուղայեցի խօջայ Սաֆար ու խօջայ Նազար եւ իրենց գերդաստանը», - Բազմավէպ 3-4/1975, էջ 389-392:

ղայի կողմից պատուիրուած եւ նրա ժառանգների կողմից Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքին նուիրաբերած, նաեւ՝ Քիւրտեանի կողմից յիշուած պատմագիրք-բառգիրք ձեռագիր ժողովածոյի հետ: Ձեռագրում պահպանուել է եւս մի յիշատակարան (խոշոր նոտրգրով՝ էջ 1բ). «Մեծ թիւն ՌՃԼԸ-ումն (1689), փոքր թիւն ՀԴ (1689) շաբաթ, ամսին Է-ումն, Տէր Յովսէփն օրհնեաց, օրն կիրակի էր օրհնեցալ»:

Ժողովածոյի նիւթերի քննութիւնը թոյլ է տալիս ենթադրելու, որ այն ունեցել է ուսումնական-ուղեցոյց ձեռնարկի նշանակութիւն եւ վկայում է խօջայ Սաֆարի որդի Մելիք աղայի ուսումնական գործընթացի մէջ հնարաւոր ներգրաւուածութեան մասին:

2. ՆՁ 160 ձեռագիրը որպէս ուսումնական-ուղեցոյց ձեռնարկ

ՆՁ 160 ձեռագիրը հասարակագիտական ուսումնական-ուղեցոյց ձեռնարկ համարելու հիմնական կռուանը դրանում ընդգրկուած ուսումնակարգերն են, որոնք ունեն աստուածաշնչեան, աստղագիտական, բառագիտական, պատմական, աշխարհագրական, բնագիտական, վարքաբանական, ժամանակագրական թեմատիկայ: Ձեռագրի մէջ գտնում ենք նաեւ հայատառ պարսկերէնով գրուած հատուած՝ «Հաւատոյ հանգանակ»-ը եւ երկու աղօթք Գրիգոր Նարեկացու: Ըստ էութեան, այն կարելի է դասել ուսուցողական նշանակութիւն ունեցող գիտական նիւթեր պարունակող ժողովածոնների շարքը, որը, կարծում ենք, վանական դպրատներում վարդապետների ձեռքին ուղեցոյց ձեռնարկ է գործածուել:

2.1 Ձեռագրի 3ա-24ա էջերում գետեղուած է Ծննդոց գիրքը: Յայտնի է, որ հայ

միջնադարեան դպրութեան մէջ աստուածաբանական խնդիրների իւրացումը, Հին եւ Նոր կտակարանների ուսուցումը քահանայական, վարդապետական եւ համալսարանական կրթութեան մէջ պարտադիր պայման է եղել⁸: Ծննդոցի գրքի գետեղումը ժողովածոյի սկզբում հայագիր դպրութեան եւ ուսուցման մէջ Աստուածաշնչեան գրագիտութեան կարեւորութեան մասին է խօսում՝ որպէս միջնադարեան հայ մարդու բարոյակրթական դաստիարակութեան հիմնաքար:

2.2 ՆՁ 160 ժողովածոյում յաջորդիւ «Յաղագս երկոտասան կենդանեաց» մասն է (24ա-բ), որը բովանդակում եւ սովորեցնում է տեղեկութիւններ տասներկու կենդանակերպ նշանների բնոյթների մասին:

2.3 24բ-27ա էջերում «Յաղագս Մոլորակացն» հատուածում ներկայացուող մոլորակների անունների համար բերում են նաեւ դրանց պարսկերէն անունները. այսպէս՝ «Երեւակն, որ պարսիկն Զոհալ ասէ... Երկրորդն Լուսնթագ զօր մուշարիմ կոչեն... երրորդն Հրատն զօր մառնի կոչեն... չորրորդն Արեգակն զօր շամս անունեն... հինկերորդն Լուսաբերն որ է Արուսեակն զօր զաւրայ կոչեն... վեցերորդն Փայլածոյն զօր աւտարիտ կոչեն... եւթներորդն լուսինն զօր դամբար կոչեն»: Պարսկերէն ձեւերի մէջբերումը փաստում է այն մասին, որ սովորողները իմացել են պարսկերէն բանաւոր խօսքը եւ մոլորակների հայերէն անունները աւելի հեշտ ուսուցանելի էր պարսկերէն նիւթի կիրառմամբ:

2.4 27ա-143ա էջերը բովանդակային առումով նոյնական են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) թիւ 3202 ձեռագրի հետ, որը «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց»-ում վերնագրուած է «Բառգիրք»:⁹ ՄՄ

⁸ Տե՛ս Խաչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, էջ 202:

⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ժ., ձեռագիրք

3202 ձեռագիրը կազմուել է 1417 թուականին, գրիչ՝ Ջաքարիա, ստացող՝ Աւետիս վարդապետ: ՄՄ 3202 եւ ՆՁ 160 ձեռագիր մատենաներում ականատես ենք բառգրքերի նոյնական դասաւորութեանը եւ բովանդակութեանը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ ՆՁ 160 ձեռագրի այս հատուածը ընդօրինակութիւն է արդէն կազմուած բառգրք-ձեռագրից, որի մի օրինակն է նաեւ ՄՄ 3202 ձեռագիրը (հնարաւոր է նաեւ գաղափարագիր օրինակն է): Ինչպէս նշում է Հին Հայկազեան բառարանի (Բառգիրք Հայկազեան լեզուի, 1749-1769 թթ.) առաջաբանում Մխիթար Սեբաստացին, բառարանագրութեան սկզբունքը, որը նաեւ աւանդոյթի ուժ ունէր Հայ բառարանագրութեան պատմութեան մէջ՝ «տգէտ» կամ այլազգի մեկին, որը հայերէն չգիտի, օգնել բառարանի միջոցով սովորելու լեզուն»¹⁰: Ասել է թէ բառգրքերը, որոնք քննարկուող ՆՁ 160 ժողովածոյում վերաբերում են մի քանի ոլորտի՝ կրօնական, քերթողական, քերականական, բժշկական, ուսուցողական կիրառական նշանակութիւն ունէին: ՆՁ 160 եւ ՄՄ 3202 ձեռագրերում բառգրքերը դասաւորուած են հետեւեալ կազմով եւ յաջորդականութեամբ՝

△ էջ 27ա-46ա - Նոր Կտակարանի երբայերէն, յունարէն հայերէն նշանակութիւններով բառացանկն է՝ «այս բառք յեռափիսական... թարգմանեալ եւ մեկնեալ յերայեցոցն ի յոյն եւ ի յունէն ի հայ կարգաւ ըստ մշաւագրաց աղիաբետից երբայեցոցն...»¹¹: Այս

բառացանկի ներառումը ժողովածոյի մէջ, փաստում է, որ Աստուածաշնչի եւ կանոնական յօդուածների ուսուցումը եւ իւրացումը կարեւորագոյն տեղ են զբաղեցրել վաղ արդի շրջանի ուսումնական գործընթացում եւ բառացանկը միտուած է Աստուածաշունչը ճշգրտօրէն իւրացնելուն՝ որպէս ուսումնականագ, որի մասին փաստում են նաեւ հայերէն ձեռագրերում ընդգրկուած այդ բառարանի բազմաթիւ օրինակները:

△ էջ 46ա-113բ - «Այս բառք քերթողականք վասն չափոյ հոմերական տաղիցն, վասն զի քերթողական արհեստքն չափաբերականք են եւ չափով վարիմ. եւ եմ, որ գեղջուկք եմ, որով ճարտարասանքն վարիմ, զի յաճախապէս փոխաբերիմ սակս զարդու ճարտասանիցն, եւ հարկ է յօգնահամար եղանիլ: Օգնեա հոգիայ»¹²: Միջնադարեան դպրատներում եւ համալսարաններում բարձր հիմքերի վրայ է դրուած եղել բանարուեստը եւ հազներգութիւնը¹³ եւ պատահական չի այս բառգրքի ներմուծումը քննարկուող ուսումնական ժողովածոյի մէջ (այն նաեւ բազմաթիւ այլ ձեռագիր մատենաների մաս է կազմում): Բառարանում, որի հեղինակը յայտնի չի, ի մի են բերուած ճարտասանների լեզուում, չափածոյ տաղերում եւ կրօնական-աստուածաբանական երկերում հանդիպող բազմաթիւ բառերի բացատրութիւններն ու մեկնութիւնները¹⁴: Այս բառարանի զետեղումը ուսումնական ժողովածոյում ունէր գեղարուեստական, կրօնա-փիլիսոփայական երկերը ճիշտ վերծա-

3001-3400, խմբ. Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019, սիւմ. 887-890:

10 Վ. Զ. Պետրոսեան, Հին Հայկազեան բառարանը և բառարանագրութեան տեսութեան հարցերը, էջ 90

11 Բառարանի մասին տե՛ս Հ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (Ե.-ԺԵ. դդ.), Երևան, 1966, էջ 143-54: Ինչպէս մշտն է Հ. Ամալեանը, բառարանի ստեղծման ժամանակի և հեղինակի մասին տեղեկութիւններ չկան, սակայն ձեռագրերում դրանց

վկայութիւններ, ըստ ամենայնի, սկսում է Ժ. ԺԱ. դարերից (տե՛ս մոյն տեղում, էջ 147):

12 Ամալեան, էջ 82-88:

13 Խաչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները, էջ 199:

14 Այս բառարանը անընդհատ ընդարձակուելով՝ 1698 թուականին տպագրուել է «Բառգիրք հայոց» վերնագրով՝ Երեմիա վարդապետ Մեղրեցու անունով (տե՛ս Ամալեան, էջ 82-88):

ներու եւ ընթերցելու հատուկին սովորեց-
նելու, նաեւ՝ ապագայ ստեղծագործողնե-
րին լեզուի բառաշերտերին եւ բառերի
նրբիմաստներին ծանօթացնելու գործնա-
կան նշանակութիւն:

△ էջ 113բ-115բ — «Թարգմանութիւն.
պարսիկ բառի: ի վարդան գրոց» մատենակից
բառացանկը կազմուել է միջնադարեան մի
անյայտ հեղինակի կողմից եւ Եղիշէի
յայտնի «Վասն Վարդանայ եւ Հայոց պա-
տերազմին» երկի իրանական բառերի բա-
ցատրութիւնն է¹⁵: Այս փոքրիկ բառացան-
կը, որտեղ հիմնականում ընդգրկուած են
կրօնական, մասնաւորապէս, զրադաշտա-
կանութեանը վերաբերող բառեր եւ եզ-
րոյթներ, համարուում է պարսկերէն-հայե-
րէն ամենահին երկլեզու հայատառ բառա-
րանը¹⁶: ՆՁ 160 ուսումնական գրչագրում
բառացանկի առկայութիւնը եւ մեզ աւան-
դուած դրա բազմաթիւ ընդօրինակութիւն-
ները վկայում են, որ Եղիշէի «Վասն Վար-
դանայ եւ Հայոց պատերազմին» եղել է ա-
ռաւել շատ ընթերցուող երկերից եւ ընդգր-
կուել է նաեւ ուսումնական գործընթա-
ցում: Բանաւոր պարսկերէնին տիրապետող
ջուղայեցի ուսումնականները երկի կրօնա-
կան բառաշերտը պէտք է հասկանային այս
բառացանկի միջոցով:

△ էջ 115բ- 119բ — «Մեկնութիւն բառից
քերականին: Վերծանութիւն. ընթերցողու-
թիւն»¹⁷ մատենակից բառացանկը կապուած

է Հայոց քերականագիտական գրականու-
թեան մէջ Դիոնիսիոս Թրակացու «Քերակա-
նական արուեստ» աշխատութեան մոտքի
հետ: Այս երկի հայերէն թարգմանութեամբ
առաջին անգամ ստեղծուեց Հայերէն քերա-
կանական համակարգուած եզրաբանու-
թիւն: Եւ պատահական չէ, որ բնագրի հա-
յերէն թարգմանութիւնները մինչեւ 17-րդ
դարի սկիզբը, որպէս քերականութեան դա-
սագիրք են օգտագործուել հայկական
դպրոցներում եւ շուրջ մեկ հազարմեակ ե-
ղել Հայ քերականների մեկնութիւնների ա-
ռարկան (Եսայի Նչեցի, Յովհաննէս Երզն-
կացի, Առաքել Սիւնեցի): Եզրաբանութեան
համար ստեղծուել են եզրոյթների բացատ-
րական բառարաններ, որոնցից է նաեւ
«Մեկնութիւն բառից քերականին» բառա-
ցանկը¹⁸: Այս բառարանի զետեղումը
քննարկուող ՆՁ 160 ժողովածույում կա-
պուած է Հայ ուսումնականներին քերակա-
նութիւն ուսուցանելու հանգամանքի հետ:

△ էջ 119բ-134բ «Բառք Զաքարիա գրչի»
բացատրական բառարան է, որի մէջ, ըստ
Հ. Ամալեանի, տեղ են գտել բազմաթիւ
բառեր «Եւթներորդ գլուխ», «Հանդէս բա-
նաստեղծաց», «Բառք խորանին» եւ «Բառք
քերթողականք» բառարաններից եւ ինչպէս
նշում է գիտնականը Զաքարիան՝ բառարա-
նի հեղինակը, նաեւ մեր կողմից նշուած
ՄՄ 3202 ձեռագրի գրիչն է¹⁹:

15 Տե՛ս Ամալեան, Աշ. աշխ., էջ 101-106; Գ. Գասպա-
րեան, «Վարդանանց պատմութեան» միջնադար-
եան բառարանը, ՊԲՀ 2, 1963, էջ 269-275; Կ.
Ռուշանեան, «Պարսկերէն-հայերէն միջնադար-
եան բառարանագրութեան մի քանի փոքրածա-
ւալ յուշարձաններ», ՊԲՀ 6 (40), 1985, էջ 40-42:

16 Բառարանի ձեռագիրը աւարտում է հետևեալ
կերպ. «Զատաջին ճառն ընթերցեալ գտի. երիս
բառս գոր պարթևն ոչ գիտաց ասելով չէ պարսիկ
և այլն. ահսէ՛ բաւանդակ», այսինքն՝ պարթևը,
որը օգնել է հասկանալ պարսկերէն բառերը, չի
հասկացել ևս երեք տասնեակ բառեր, որոնք ասել
է, որ «չէ պարսիկ»:

17 15-րդ դարից յետոյ այս բառացանկը մտնում է
նաև «Բառք քերթողականք»-ի մէջ, տե՛ս Ամա-
լեան, Աշ. աշխ., էջ 84:

18 Այս բառացանկը լաճախ գտնում ենք Վարդանի
քերականական աշխատութեան հետ մոյմ ձե-
ռագրում մեկտեղուած, օր.՝ Վեմետիկի մատե-
նադարան, հմր 17, տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հտ. Գ,
Հայերենագիտական ուսումնասիրութիւններ,
աշխ. Պ. Յովհաննիսեան, Եր.: Երևանի պետ.
համալս. հրատ., 2008, էջ XXVI; Բառգիրքը տե՛ս
մոյմ տեղում, էջ 57-65:

19 Տե՛ս Ամալեան, Աշ. աշխ., էջ 96:

Օչջ 135ա-143ա «Բառ գաղիանոսի բժշկապետի եւ ճարտարի» բառարանով աւարտուում է ՆՁ 160 ձեռագիր-ժողովածուի բառգրքերի շարքը: Գաղիանոս բժշկապետի յունարէն աշխատութիւնը ԺԱ. դարում հայերէն է թարգմանուել արաբերէնից, որը ժամանակի Առաջաւոր Ասիայի բժշկութեան եւ գիտութեան լեզուն էր: Արաբերէնի գերակայութեան պատճառով աշխատութիւնում օգտագործուած յունական բժշկական եզրոյթները անհասկանալի էին եւ նշուած բառարանի գոյութիւնը պայմանաւորուած էր այդ բառաշերտի բացատրութեան անհրաժեշտութեամբ²⁰: «Բառք Գաղիանոսի բժշկապետի» բառարանի գետեղումը քննարկուող ՆՁ 160 ձեռագրում վկայում է ուսումնական գործընթացում բժշկագիտութիւնը որպէս ուսումնասիրուող առարկայ, իսկ Գաղիանոսի աշխատութիւնը որպէս ուսումնական ձեռնարկ գործածելու մասին:

ՆՁ 160 ձեռագրի էջ 143ա-ում աւարտուող բառգրքերի շարքը, որոնք համընկնում էին ՄՄ 3202 ձեռագրին, եզրափակւում է գրիչ Ստեփանոսի չափածոյ յիշատակարանով (տե՛ս վերեւում) եւ սկսւում է թեմատիկ առումով ժողովածուի յաջորդ հատուածը, որը պարունակում է պատմական, աշխարհագրական, եւ բնագիտութեան վերաբերեալ նիւթեր: Ընդգրկուած նիւթերից կարող ենք ենթադրել, թէ մասնաւորապէս ո՛ր երկերն են կրթական գործընթացում ունեցել ուսուցողական նշանակութիւն:

2. 5 Առաջին նիւթը պատմական է (էջ 143բ-194ա)՝ «Յաղագս մեծի Ասիաարարութեան Օրպէլեանց եւ թէ ուստի էին եւ որպէս եւ վասն

գալոյ Աոցայ յայս աշխարհս եւ վասն բագում բանից եւ գործոց Աոցայ գրոյցք յոլովք»: Ժամանակի պատմագիտութեան խոշորագոյն ներկայացուցիչ Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութիւն Տանն Սիսական» երկի ԿԶ. գլուխն է, որը համառօտ պատմութիւնն է Օրբէլեանների ծագման, հաստատման՝ Ստեփանոս Օրբէլեանի անձի մասին ինքնակենսագրական բնոյթ ունեցող տեղեկութիւններով:

2.6 Պատմական նիւթին յաջորդում է էջ 194ա-217բ «Աշխարհացոյց եւ պատմութիւն ամենայն տիեզերաց» աշխատութիւնը: Վարդան վարդապետի այս երկը եղել է հետազօտողների ուշադրութեան կենտրոնում եւ ունի կարճ ու ընդարձակ խմբագրութիւններ²¹: Քննարկուող ՆՁ 160 ժողովածոյ-դասագրքում ներառուած այս աշխատութեան ընդարձակ խմբագրութիւնը աւարտուում է. «եւ այլ բագում ազգ եւ քաղաք եւ աշխարհ գոր ամօգուտ համարիմ զշարադրելն Աոցայ վասն որոյ ոչ կամեցայ եւ Քրիստոս փառք յաւիտեանս ամէն»²²: Սակայն էջ 213բ-217բ էջերում շարունակուում է նոյնական բովանդակութեամբ եւս մեկ հատուած, որը, թերեւս, այս աշխատութեանը յատուկ բնագրական միջամտութիւն է՝ «Աշխարհացոյց սկզբան լեռանէ» ենթաւերնագրով, որտեղ թուարկում է տարածաշրջանի «աշխարհների», «երկրների», գաւառների, քաղաքների տեղագրութիւնը եւ ապա յաջորդում են՝ «Լերիմք անուանիք բաժանէն այսորիք» եւ «Եւ գետք աշխարհի» հատուածները (էջ 217բ-218բ)՝ դրանք բաժանող լեռների եւ գետերի անունների թուարկմամբ: Այնուհետեւ՝ էջ 218բ-ում «Ահայ կատարեցան ամենայն տիեզերք եւ պատմածք խօսից. եւ անայ

²⁰ «Բառք Գաղիանոս բժշկապետի» բառարանը որպէս ամենահին բժշկական բառարան մանրամասնօրէն քննուած է Խ. Մելիք-Փարսադանեանի «Համառօտ տեղեկութիւններ մեզ հասած հայ ամենահին բժշկական բառարանի մասին» յօդուածում (Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հայ Բժշկութեան և բիոլոգիայի պատմութեան սեկտոր, *Աշխատութիւններ*, թիւ 2, 1949, էջ 67-76):

²¹ Տե՛ս Փ. Փ. Անթաթեան, «Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի», - *ՊԲՀ* 3 (106), 1984, էջ 87-102; *Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի*, կազմ. Հայկ Պէրպէրեան, Բարիդ, տպ. «Արաքս», 1960:

²² «Աշխարհացոյց»-ը շատ լայն տարածում է գտել. ըստ երևոյթին, օգտագործուել է իբրև ուսուցողական ձեռնարկ: Պահպանուել է անէլի քան հարիւր ընդօրինակութիւն», տե՛ս Անթաթեան, *Այն տեղում*, էջ 101:

կամիմ գչափ դորա համառօտել» Հատուածը սովորեցնում է քաղաքների հեռաւորութիւնները մղոններով:

2.7 Յաջորդել՝ 219այ էջից սկսւում է «Ի ժամանակին յորում էր թուականն Հայոց ԳԾՀ թագաւորն Հոռոմոց Վասիլ ել յարեւելս» սկզբնագրով պատմութիւնը, որի աղբիւրագիտական եւ պատմագիտական արժէքին անդրադարձել է Լ. Խաչիկեանը եւ նշել, որ այդ պատմութեան փոփոխակը յայտնի է «Տեսիլ սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ մականունն Կոզեռն կոչ» եւ օգտագործուել է Մատթէոս Ուռհայեցու կողմից, իսկ այդ տեղից էլ, համառօտուելով, մուտք է գործել Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութեան» մէջ: Ըստ գիտնականի, պատմական պատահիկը սկզբնապէս եւ ինքուրոյնաբար հաւաքուել ու գրի է առնուել Յակոբ Սանահնեցու կողմից (ԺԱ. դար՝ «Ի ժամանակագրութեանէ Յակոբայ քահանայի»)²³: ՆՁ 160 ձեռագրի Հատուածը, որն աւարտուում է 220բ էջում, Սանահնեցու բնագրի թերի արտացոլումն է եւ վերաբերում է:

Ա. Բիւզանդական կայսր Վասիլ Բ-ի (976-1025 թթ.) Արեւելեան արշաւանքին եւ Յովհաննէս-Սմբատ Թագաւորի կողմից Անին նրան կտակելու իրադարձութեանը. «Ի ժամանակին՝ յորում էր թուական Հայոց. դճ.հ. Թագաւորն հռոմոց Վասիլ էլ յարեւելս. եւ եկեալ յաշխարհն Հայոց անթիւ բազմութեամբ զօրօք. խուժադուժ ազգաց. եւ խնդրեաց զԱնի քաղաք եւ զամենայն տուն Շիրակայ՝ ի Յովհաննիսէ որդւոյ Գագկայ Հայոց Թագաւորէն: Իսկ Յովհաննէս յաղագս տկարութէան մարմնոյն իւրոյ խոստացաւ տալ զԱնի. ՚ի Թագաւորն հռոմոց.

զկնի մահուանն իւրոյ: Յայնժամ Թագաւորն Վասիլ դարձաւ յաշխարհն Վրաց եւ առաքեաց դեսպան...»,

Բ. Բիւզանդա-վրացական 1021-1022 թթ. պատերազմին,

Գ. Ակնարկ Պետրոսի կաթողիկոսի Տրապիզոն գնալուն եւ Զրօրհնէքի արարողութեանը,

Դ. Վասիլ Բ կայսր Հայադաւան դառնալու աւանդութեանը:

ՆՁ 160 ձեռագրի բերուած քննարկուող Հատուածը ունի նաեւ հետեւեալ ժամանակագրական վերջաբան՝ «Ի վեց.Ծ.ԽԶ. թվին թագաւորաց Լեոն Բագրատունաց ի Կիլիկայ: Ի վեց.Ծ.ԾԳ. թվով ելն մահմետայ յետ ծնընդեանն Բրիստոսի: Ի վեց.Ծ.ՀԸ. թուին հայոց ել թաթար եւ գլուխ զօրուն չարմայ դանն: Յէաթն.Ծ.ԾԳ. խարաճն24 էրաւ: Յէաթն.Ծ.ԽԱ. Հոռոմիւն աւելեցաւ. օգնականութեամբ եգիպտացոց թագաւոր սուլտանին քանզի գիտաց թէ հաւատակից իւր է թաթարն: Յէաթն.ԾԾ. դազան դանն մեռաւ: Յէաթն.Ծ.ԾԸ. Ապուսայիտ դանն մեռաւ: Թամուրն Պ.Լ.Զ.»:

2.8 ՆՁ 160 մատենանի 222ա-334բ էջերում Մեսրոպ Երէց Վայոցձորեցու «Պատմութիւն Սրբոյն Ներսէսի Հայոց հայրապետին» վարքագրութիւնն է, որը ներկայացնում է Ներսէս Ա Մեծի սրբախօսական կերպարը: Բնագիրը ընդգրկուած է կրճատումներով մինչեւ ԺԵ դուիսը, նպատակ ունենալով ներկայացնել Դ. դարի երրորդ քառորդի Հայկական քաղաքական, քարոզչական եւ կանոնական օրէնսդրութեան ամենացայտուն գործիչներից մեկի՝ Ներսէս Մեծի կեանքը: Այս երկը արժեւորուել է իր պատմագիտական, աղբիւրագիտական, բնագրագիտական նշանակութիւններով²⁵, սակայն

²³ Տե՛ս Լ. Խաչիկեան, *Յակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի*, - «Աշխատութիւններ», հտ. Ա, «Նաիրի» հրատ, Երևան, 2012, էջ 165-201:

²⁴ *Խարաճ/ջ՝* հողի հարկատեսակ, որը մոնղոլական հարկային համակարգի մաս է կազմել, սակայն

սկզբնաւորուել է դեռ արաբական տիրապետութեան շրջանում: Այն աւելի ուշ ձեռք բերեց հաւաքական հարկային եզրի իմաստ:

²⁵ Տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան, «Մեսրոպայ Երիցու Վայոցձորեցոյ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի», Մատենագիրք Հայոց,

չի շեշտադրուել կրթական գործընթացում այն ընդգրկելու փաստը եւ դրա ունեցած նշանակութիւնը, ինչը վկայում է սոյն ձեռնարկ-ժողովածոն: Ընդհանրապէս, վարքագրական երկերի ընդգրկումը ուսումնական գործում կարեւոր է եղել քրիստոնէական հաւատքի տարածման, տիպարային օրինակելիութեան եւ անբասիր կենցաղաւորութեան ստեղծման եւ տեսական աստուածաբանութեան զարգացման առումներով, ինչը գործնականում դիտարկելի է քննարկող ձեռագիր-ձեռնարկում: Նշենք, որ ՆՁ 160 ձեռագրի վերջին յիշատակարանը հետեւում է վարքագրութեանը (տե՛ս վերելում) եւ 334թ էջից սկսեալ նկատուող ձեռագրային ոճի փոփոխութիւնը հիմք է հանդիսանում կարծելու, որ ժողովածոյում տեղադրուած մնացած հատուածները կարող են նաեւ յետագայ յաւելումներ լինել:

2.9 Յաջորդ հերթական հատուածը նուիրուած է բնագիտութեանը (էջ 334թ-350աթ)՝ «Յաղագս բնութեան մարդոյն կազմութեան ի չորից գոյացեալ ի մարդոյ. զի չորք պատճառք եղեն» բնաբանով: Այս անհեղինակ գործը նուիրուած է չորս տարրերի ուսմունքին եւ ընդգրկուել է ինչպէս միջնադարեան տարբեր բնոյթի ձեռագրերում, այնպէս էլ՝ բժշկարաններում: Միջնադարում գերիշխող չորս տարրերի վերաբերեալ ուսմունքը որպէս բնագիտական կարեւոր գիտելիք ձեռագիր-դասագրքում ընդգրկելն ունէր ուսուցողական նշանակութիւն: Հաղորդում են հետեւեալ մանր ժամանակագրութիւնները՝ էջ 350թ - «Յեղանոյն Ադամայ ի դրախտէն» եւ էջ 351ա - «Ամբ կեցաց Աստուծոյն»:

2.10 Այս ձեռագիր ժողովածոյի քննութեան մէջ ուշադրութեան է արժանի

էջ 351բ-352բ գետեղուած եւ ձեռագրի համար ամփոփիչ նշանակութիւն ունեցող «Հաւատոյ հանգանակ»-ի հայատառ պարսկերէն տարբերակը (տե՛ս յաւելում Ա.), որը ցոյց է տալիս ջուղայահայութեան շրջանում բանաւոր պարսկերէնի ոչ միայն տարածուածութեան, այլ նաեւ՝ այդ լեզուի նկատմամբ եղած վերաբերմունքի մասին: Ա. Խ. Մովսիսեանը իր «Ուրուագծեր հայ դպրոցի եւ մանկավարժութեան պատմութեան» (Երեւան, 1958, էջ 383) ուսումնասիրութեան մէջ նշում է, որ հայոց դպրոցներում Ե.-Ձ. դարերից ուսուցանում էին յունարէն կամ պարսկերէն, իսկ Ձ.-Թ. դարերում՝ նաեւ պահլաւերէն: Մեզ յայտնի վաղ արդի շրջանի հայ ձեռագիր եւ վաղ տպագիր մատենագրութեան մէջ առկայ հայատառ պարսկերէն ժառանգութիւնը խօսում է այն մասին, որ հայերը հիմնականում տիրապետել են բանաւոր պարսկերէնին՝ բացի սահմանափակ թուով վարդապետական կրթութեամբ անձանցից, որոնք նաեւ կարդում եւ գրում էին պարսկերէն: Նոր Զուղայի դպրոցներում պարսկերէնի համակարգուած ուսուցման մասին առաջին տեղեկութիւնները գտնում ենք ԺԹ. դարից սկսեալ. «Մեծահամբաւ ջուղայեցի Ադայ Պետրոս Ոսկանեան եղեւելի իշխան եւ վաճառականն ի Մադրաս, յամի 1750 կտակեաց քսան եւ վեց հազար հինգ հարիւր արկաթ ուսփիս, զի նովին գումարաւ բացեալ լիցի ՚ի Զուղայ դպրոց հիմնաւոր, յորում եղիցի դասատուութիւն հայերեւելն՝ լատիներէն եւ Պարսերէն լեզուաց»²⁶: Յետագայում արդէն աւելի յաճախակի են դպրոցական ծրագրերում պարսկերէնի ընդգրկուածութեան վկայութիւնները եւ կարող ենք ասել, որ այն համակարգուած բնոյթ է ստացել ԺԸ.-ԺԹ.

ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Ամթիլիս-Լիբանան, 2010, էջ 630-743: Հայ դպրութեան պատմութեան մէջ այս երկի նշանակութեամբ է պայմանաւորուած, որ 1775 թուականին այն առաջին երկերից էր, որ Յակոբ Ծափամի-

րեանը տպագրեց Մադրասում, իսկ 1855 թուականին երկրորդ անգամ տպագրուեց Վենետիկի Ս. Ղազարում:

26 Պատմութիւն Նոր Զուղայոյ որ Յասպահան, հտ. Բ, էջ 254-255:

դարերում²⁷: Իսկ սոյն ձեռագրում քրիստոնեական հաւատի հիմնական դոգմաները հայատառ պարսկերէնով գրելը ցոյց է տալիս ժամանակի ջուղայահայութեան շրջանում պարսկերէնը վերկրօնական հարթութիւնում²⁸ եւ երկրորդ լեզու դիտարկելու փաստերը: Ուշ միջնադարեան իսլամական Իրանում ինքութեան նոյնականացման հիմքում կրօնն էր²⁹, որին ստորադասուում էր ազգային, նաեւ՝ լեզուական պատկանելութիւնը: Այս իրավիճակը շօշափելի էր նաեւ հայերի շրջանում, որոնք կրօնական ինքնութիւնը պահպանելու համար գործածում էին նաեւ պարսկերէնը, այն ինքնութեան համար վտանգ չհամարելով:

2.11 ՆՁ 160 ձեռագիրը, ստեղծուած քրիստոնեական աշխարհայեացքի տիրապետման ժամանակաշրջանում, աւարտուում է «Աղօթք Գրիգորի Նարեկացոյց՝ Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէր Աստուած հօգօր, զդառնացողիս զաղաչանս...» եւ «Նորին Գրիգորի

խօսք ընդ Աստուածայ՝ Որդի աստուած կենդանոյ. ահեալ ամենայնի հօրդ աւետորի... (Մատեան ողբերգութեան, Բան ԽԱ)» աղօթքներով: «Մատեան ողբերգութեան» աղօթքները ձեռագրերում եւ հմայիլներում որպէս պահպանութեան գիր օգտագործելն ունի հին աւանդոյթ եւ նշուած երկու աղօթքներն իրենց կայուն տեղն են ունեցել հայկական հմայիլներում³⁰: Ձեռագիր ժողովածոն եզրափակուում է վերոնշեալ պահպանիչ աղօթքներով:

Եզրակացութիւն: Քննութեան առարկայ ՆՁ 160 ձեռագիրը ուսումնական ձեռնարկ-ժողովածոյի օրինակ է, որում ընդգրկուած նիւթերի թեմատիկ եւ ծաւալային բնոյթը խօսում է այն մասին, որ այն օգտագործուել է որպէս հասարակագիտական ուղեցոյց-ձեռնարկ վարդապետի ձեռքում ընդհանրական կրթութեան գործընթացում: Նիւթերը, որոնք գործիք են եղել

²⁷ Այստեղ նշենք, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքում պահուող հ^օ 306 ձեռագիրը՝ «Պարսկերէն եւ հայերէն քերականութիւն», գրուած 1846 թ. Բատալիայում, որի գրիչը՝ Գեորգ Աւետեան Զաքարեանց Զուղայեցի առաջաբանում թողել է հետևեալ տեղեկութիւնները. «Ազգասէր պարոնայք: Պարտիք ազգասիրութեան ի վաղնջոց ստիպէր զիս առ այս գործ, որ կոչի՝ Պարսերէն և Հայերէն Քերականութիւն, բայց եւ կարծիք մի անգէն խափան առնէր զայս ստիպողութիւն մինչև ցայս վայր: Այս է ընդունեայն վաստակն եւ անօգուտ ջանն, զոր յայսմ առնել ունէի: Քանզի յառաջ քան զայս յազգ մեր հազիվ գտանիր ոք, որ ցանկայր ուսանել զգիր Պարսիցոց: Այլ այժմ լսեմք, զի խնամօք ամենավեհին յերկրորդ հայրենիս մեր ի Նոր Զուղա, ի ձեռն խոհական եւ քաջ հովուաց հաստատեալ են երեք դպրոցք, յորս մանկունք սիրելի ազգի մերոյ բաց ի հայերէնն, ուսանեն նաեւ զպարսերէն լեզու, ուր եւ ես յայսպիսի յանկատար ժամանակի փոյթ կալա երեսն առնել զվաղեմի տենչանս իմ, առ ի նպաստամտոյց լինել ճոցին յառաջադիմութեան, որ եւ ձեռնառնութեամբ Տեառն, յաջողեցաւ ինձ ի լրումն ածել աշխատանաց, զոր ամենայն ակնածոյթյամբ եւ խոնարհ դիմօք վերընծայեմ ձերում պատուելութեանն» (տե՛ս Յուդակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 2-3):

²⁸ Այս վերաբերմունքը կարող էր կապուած լինել նաև իսլամում պարսկերէնի նկատմամբ եղած դիրքորոշման հետ, որը արաբերէնից լետոյ այն միակ լեզուն էր, որով մուսուլմանի *ճանապարհ* ընդունելի էր՝ ըստ հադիսի՝ «դրախտի մարդկանց լեզուն, որով ընդունելի էր աղօթելը», տե՛ս R. Brunschvig, «Kernâl Pâshâzâde et le persan», *Mélanges d'Orientalisme, offerts à Henri Massé, Téhéran, Imprimerie de L'Université*, 1963, pp. 54-55: Պարսկերէնը ձեռք էր բերել թե՛ քրիստոնեաների և թե՛ մուսուլմանների համար գործնական նշանակութիւն՝ աղօթել, քարոզել պարսկերէն, սակայն չէր նշանցում կրօնի հետ: Սա է պատճառը, թերևս, որ հայերէն բազմաթիւ ձեռագրերում հանդիպում ենք հայատառ պարսկերէնով գրուած բառական թուով կրօնական հատուածներ (Յ. Կիրակոսեան, *Մատենադարանի հայատառ պարսկերէն Աւետարանի ձեռագրերը. քննական ուսումնասիրություն*, Երևան, 2020, էջ 218-225):

²⁹ Richard N. Frye, «Minorities in the history of the Near East», *Acta Iranica* 28, *Hommages et Opera Minora*, vol. XII, Brill, Leiden, 1988, p. 470.

³⁰ 1659-1731 թթ. հնատիպ ժապանաւեման հմայիլներում մեջբերուած են Գրիգոր Նարեկացու Մատեան ողբերգութիւնից Բան ԺԲ. և ԽԱ, տե՛ս Մանուկեան Ս., Ղազարյան Դ., *Գրիգոր Նարեկացին հայ ձեռագրական արուեստում*, Երևան, 2016, էջ 19, լր. 23:

ստեղծելու վաղ արդի շրջանի ջուղահայ ուսումնականի հոգեմտաւոր պաշարը մատենակից բառացանկեր ու բառարաններ են, աստուածաշնչեան, պատմական, աշխարհագրական, ընդհանուր աշխարհաճանաչողական, վարքագրական, բնագիտական բովանդակութեամբ բնագրեր, մի քանի մանր ժամանակագրութիւններ: Այս ուսումնականագրերը կոչուած էին ապահովելու քրիստոնէական աշխարհայեացքի ամբողջականութիւնը եւ աշխարհիկ գրագիտութիւնը: ՆՁ 160 ձեռագիրը արտացոլում է վաղ արդի շրջանի հայ դպրութեան մէջ ընդունուած ուսումնական ուղղութիւնը, այն երկերն ու աշխատութիւնները, որոնք ուսուցողական նշանակութիւն են ունեցել: Դրանք թոյլ են տալիս հասկանալու այդ ժամանակաշրջանում հայ դպրութեան երախտաւորների որդեգրած ծրագիրը՝ հայ ուսումնականների բարոյակրթական դաստիարակութեան եւ հոգեկան կերտումների, ազգային նկարագրի եւ ինքնութեան ստեղծման ուղղութեամբ: Հայագիր ուսուցողական սոյն ուղեցոյց ձեռագիր-ժողովածոյի հատուածներից «Հաւատոյ Հանգանակը»՝ գրուած հայատառ պարսկերէնով, վկայութիւն է հայերի շրջանում պարսկերէնի բանաւոր իմացութեան եւ այդ լեզուն կրօնական բնագրերում օգտագործելու հայերի վերաբերմունքի մասին:

Յանելուած Ա.

Էջ 351բ-352բ Հաւատամք ի պարսից լեզու

«Բաւար մէ քունամ բա իաքի խուտայ. փղա-
րի համա թուան, քարիգար իասմանհա ու զամինհա
. փայդա ու նափայդահա: Բաւար մէ քունամ

բաեաքի խուղավանդ ի շահ մսեհ. փսարի խուղա,
զայիդ ազ խուղա. փղար իեգանա. օ բա թաբիաթ
փղար. խուղա ազ խուղա նուրիզան նուր. խուղա
ի հաղիղաթ. ազ խուղաի հաղիղաթ. զայդա վանա
նասաղթ ու թաբիաթ. թաբիաթ փղար. բադան քի
համա չիզ շուտ ասըման ու զամին. փայդայ ու
նափադհայ ու վա ազ բար ա. մարդուման ու վա
իխալասիմա. ֆրու-ամատ. ազ ասըման թան շուտ
մարտ շուտ. զայիդ թամամիաթի ազ մարիամի
փաք, ի բ[ե]ք բաջանի փաք. բղան ըստատ
թանուջան. ֆախմն³¹ ուվա համակ³²ի. հարչի բուդ
ազմարդ. ուստ աղամիաթի. վա բէգուման բու
դան իըսքընջա³³ քաշիդ. ւարիստ ու վար սալիպ
շուտ. դահֆըն շուտ. սէում ուզ բար խաստ բար
շուտ. բար ասըման նըշըստ. բա ուստի փղար.
ամա դանիշ բա համա անթան. [ո]ւթուանաի փղար
բա դաւարի զընդիգան ու վա մուրդկան. անքի
փաք ու բէ մարկ փաթիշահի ու ֆանահ նաղարաթ:
Բաւար մէ քունամ բա ջանի փաք. նաշուտա ու վա
թամամի գվթա սիուն բադին ու փեղամբարան ու
վա ընջիլ ու ֆրու օմատ յորդան ալլմն թալիմ տադ
/բ/աւարիան ու վա փայքստ շուտ վա փաքան:
Բաւար մէ քունամ վա համակ³⁴ ի կաթուղիկէ ու վա
հաւարիան անքլիսա ի փաք: Բաւար մէ քունամ վայ
եաք զիմատայ շուտան. ուրաթ քաշիդան ու վա
խալասի շուտան. ու վա աֆրուդան ի գունահ բար
խաստան. ի մուրդագան բա դաւարի աբադի
ջանհա ու վաթան հա ու մալաքութ իասըման ու վա
զընդիգանի ապադի. ամին»:

31 Հմմտ. պրսկ. *fahm* «միտք»: Բառը արաբական ծագման է և եմթարկուել Զուլայի բարբառում գործող կոկորդայիմ -հ- շփականի դիմաց ճետ-նալեզուայիմ -kh- շփականի գործածութեան կա-նոնիմ՝ որպէս խ-ախոս բարբառ, տե՛ս Վ. Կատ-

վալեան, «Հ-խ հնչյունների համապատասխանութիւնը հայերէնի բարբառներում», ՊԲՀ № 3 (163), 2007, էջ 163-172:

32 Հմմտ. պրսկ. *hama*, մ. պ. *hamak* > հյ. *համակ*:

33 Հմմտ. պրսկ. *shekanja* «տամջանք»՝ շ- > ս- տեղաշարժով:

34 Տե՛ս լղում 31: